

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍՈՑ-ՀՈՒՐ

# ԲՈՒԼՂԱՐԱՑԻ ՍԱՅԱՆ



ՊԵՏՎՐԱՏ  
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·2

891. 99  
4-84

2011-07

6-84  
- un

ԲՈՒԼՂԱՐԱԳԻ ՍԱՀԱՅ

452  
38


Ս Պ Տ - Ց Ո Ւ Թ

ԽՄԲ. Գ. ԲԵՍ

Գ Ե Տ Վ Ա Տ

1982

Ա Պ Կ Ա Ր Ա



## ԲՈՒԼԴԱՐԱՑԻ ՍԱՇԱՆ

### I

Մոսկվայի պիոներական տան մեջ այդ որը ինչ վոր բացառիկ կենդանություն և աշխուժություն կար: Պիոներները յեկել եյին տեսնելու բուլղարացի Սաշային, վոր յերկու որ առաջ հասել եր Մոսկվա: Սաշան պետք ե պատմեր բուլղարիայի և իր մասին:

### II

— Յես 10 տարեկան եյի, այսպես սկսեց նա, և լավ հիշում եմ, ինչպես Հայրս միշտ զաղանի ժողովների յեր գնում և շատ հաճախ ել, մեզ մոտ եյին հավաքվում նրա ընկերները:

Բոլորն ել հորս նման ծխախոտագործ բանվորներ եյին, վորոնցից շատերը գործազուրկ եյին: Յերբ նրանք սուն եյին մտնում, վրաներից ծխախոտի հոտ եր գալիս:

Հայրս միշտ վաղ եր գնում աշխատանքի, շատ անգամ իմ արթնանալուց առաջ և միշտ մութն ընկնելուց հետո յեր վերադառնում, թեկ տակ մեզ համար հաց բերելով:

Շատ հաճախ պատահում եր, վոր նա վոչինչ չեր ուտում և ջարդված ընկնում եր անկողնի վրա ու քնում: Այդպիսի որերին մայրս լաց լինելով ասում եր. — Սա՛շա, տեսնո՞ւմ ես հորդ վիճակը. ահա թե ինչպես են շահագործվում բանվորները՝ մի կտոր հացի փոխարեն: Սրա համար ե, վոր հայրդ և իր ընկերները գործադուլի յեն դիմում, պայքարում են ու հալածվում:

Քէշ լոելուց հետո, Սաշան շարունակեց իր պամությունը.

— Բանտարկվելուց 3-4 ամիս առաջ հայրս 2 որով հիվանդ պառկեց. յերբ մյուս որը աշխատանքի գնաց, նրան կրծատել եյին և նա մնաց գործազուրկ: Մայրս կար եր անում և հացի փող աշխատում:

Այսպես ե բանվորների դրությունը մեզ մոտ: Հենց վոր մեկն ու մեկը հիվանդագավ դուրս կմնա:

Մեզ մոտ անչափահաս յերեխաներ և կանայք շատ կան գործարաններում, սրանք ստանում են շատ չնչին աշխատավարձ: Բանվոր-յերեխաները դպրոցի յերես չեն տեսնում և անգրագետ են մեծանում:

Յերբ հորս ընկերները մեզ մոտ եյին հավաքվում, խոռոշ  
եյին դործարաններում տիրող զանազան տեսակի բանություն-  
ների և գաղանությունների մասին, դործարանատերների կողմից  
բանորվների շահագործման մասին և ասում եյին, վոր պետք ե  
անպայման ապստամբել, պետք ե ազատագրվել նրանց լծից:

Նրանք միշտ խոսում եյին շատ ցած ձայնով, գրեթե փսփսա-  
լով:

Յետ շատ եյի հետաքրքրվում նրանց ժողովներով և ինձ սուտ  
քուն ձևացնելով, ականջ եյի դնում:

Մի որ, սեպտեմբեր ամսի սկիզբն եր, հայրս տուն յեկավ չա-  
փազանց վրդովված. նա չ' ճաշեց. ինձ ասաց, վոր հետեւմ նրան:  
Մենք գնացինք ցախատուն: Յերբ ներս մտանք, նա դուռն զդույց  
կողակեց և գնաց դեպի ցախատան խորքը:

Փայտերի տակից ինչ վոր ծրար հանեց և փսփսալով ա-  
սաց ինձ.

— Շտապ կտանես այս ծրարը և կհանձնես քեռի կիրիլին:  
Բայց այնպես կանես, վոր վոչ-վոք չնկատի այդ:

Յեզ նա ծրարը թաքցրեց իմ բլուզի տակ:

Յետ դուրս յեկա տնից և մեծ ճշությամբ կատարեցի հորս  
պատվերը: Դրանից հետո, մինչև հորս բանտարկվելը, յետ մի  
քանի անդամ նման ծրարներ տանում բերում եյի:

Մեզ մոտ, բուլղարիայում ազատ չի, ինչպես այստեղ:

Այնուեղ կոմունիստներին, բանվորներին, չքավոր գյուղա-  
ցիներին շատ են նեղում. չեն թողնում, վոր ազատ խոսես: Այն-  
տեղ իշխանությունը բուրժուաների ձեռքին է: Հենց վոր մի բան-  
վոր խոսեց իրենց իրավունքների մասին, ձերբակալում են և  
բանտ նստացնում: Սրա համար ել իմ հայրն ու իր ընկերները  
միշտ գաղանի եյին ժողովի հավաքվում: Այն ժամանակ յստ լավ  
չեյի հասկանում թե ինչո՞ւ յեր հայրս այդքան զգույշ շարժվում:

Այն որը յերբեք չեմ մոռանա, սեպտեմբերի 12-ին, յերբ յետ  
ամեն որվա նման շուտ եյի քնել, մայրս արթնացրեց ինձ ու...

Բնաթաթախ շուրջու եմ նայում. չեմ հասկանում թե ինչ ե  
կատարվում: Յերկու բարձրահասակ զինվոր տեսա, հացան-  
ների ծայրին սվիններ անցկացրած, նրանց մեջտեղում անշարժ  
կանգնել եր հայրս: Սենյակում ուրիշ 5 վոստիկան ել կար: Ամեն  
ինչ իշխանությունը իրար: Վոստիկաններից մեկը ինձ մոտեցավ,  
կոպիտ կերպով ձեռքից բռնեց և դեն չարփեց: Այնքան անսպա-  
սելի և ուժեղ եր հարփածը, վոր գլուխս պատին զարնվեց և յետ  
շշմած վեր ընկա:

Այդ ըոսեյին հայրս խիստ բղավեց նրանց վրա և փորձեց  
ինձ մոտենալ, բայց վոստիկաններն իրենց սվինները դեպի: նրան  
դարձնելով թույլ չտվին: Յետ նոր նկատեցի, վոր հորս  
թերը կապված եյին:

Վոստիկաններն սկսեցին քրքրել անկողինս:

Զգիտեմ ինչ եյին փնտրում, ամեն ինչ տակնումքա եյին տա-  
նում, անդամ բարձս պատուցին:

Յերբ ել նայելու տեղ չ' մնաց, նրանց պետը «գնանք» հրա-  
մայեց: Յես տեսա, վոր իմ հորը տանում են, ճշացի, վազեցի  
առաջ և ուղեցի նրան փաթաթվել. չ' թողեցին, վոստիկաններից  
մեկը վոտքով խփեց, յես վայր ընկա. արագ բարձրացա ու վազեցի  
հորս յետեկից: Նրանք արդեն փողոցի դռանն եյին. մթության մեջ  
հորս դեմքը չ' տեսա, բայց լսեցի նրա ձայնը.

— Սա՛ շա, լաց չ' լինես, հիշիր ինձ. հետեւիր իմ որինակին:  
Յես յերբեք չեմ մոռանա հորս այդ վերջին խոսքերը:

### III

Հորս բանտարկությունից մի քանի որ հետո, մեր քաղաքը  
զինվորների կողմից պաշարվեց: Բուրոր խանութները փակ եյին:  
Փողոցները լի եյին զինվորներով: Դուրս գալ չեր կարելի: 4-5  
որ լուրս տներում մնացինք, չաց ել չունեյինք:

Այդ որերին, գիշերները ինչ վոր շղթաների զբնգոց եր լրս-  
վում. մայրս ասում եր, վոր կոմունիստներին և շատ գյուղացի-  
ներին շղթայում տանում են. ասում եր, վոր շատ գյուղեր ըմ-  
բոստացել են:

Յերբ տանից դուրս յեկանք, լսեցինք, վոր իսկապես շատ  
զյուղացիներ, կոմունիստների առաջնորդությամբ, կուլի և կա-  
ռավարության դեմ, իշխանությունը գրավել են և կարմիր դրո-  
շակ պարզել: Բայց կառավարության զինվորները հազթել են  
ապատամբներին և անխնա կոտորել:

Սեպտեմբերյան ապատամբությունից հետո մեզ մոտ սկսվեց  
ավելի մեծ խստություն: Ել չեյի տեսնում հորս ընկերներին ու  
ծանոթներին, բոլորը անհայտացել եյին:

Իմ մեջ բուռն ցանկություն կար հորս տեսնելու. շատ եյի  
կարոտել նրան և ծրագրել եյի անպայման զնալ բանոտ: Այս մա-  
սին վոչինչ չեյի ասում մայրիկիս, վորը այդ դեպքերից հետո  
ինձ հսկողության տակ եր պահում:

Մի որ մորիցս թույլովություն ստացա, իրը թե ընկերոջս  
տունը գնալու և ուղեորդեցի դեպի բանոտ: Բանտը շատ հեռու  
յեր վազելով եյի գնում, չուտով տուն վերագանալու համար:

Բանտից վոչ շատ հեռու յետ կանգ առա. ծանալարհի վրա  
յերեացին մի խումբ զինված մարդիկ: Յերբ մոտեցան, յետ ճա-  
նաչեցի հորս յերկու ընկերներին, վորոնցից մեկին յետ վերջին  
անդամ նամակ եյի տարել: Իսկույն վազեցի դեպի նրանց՝ «ո՞ւ-  
ե հայրիկս» հարցնելով:

— Կորի՞ր, շան ծնունդ, գոռաց ինձ վրա մի հաստ զինվոր, —  
յեթե այդքան ցանկանում ես, քեզ ել կուղարկենք հորդ մոտ:

Յեվ ինձ համայնքին փաղաք վերադառնալ:

Յես վերադառնա, առանց իմ հայրիկին տեսնելու:

Մայրս միշտ գնում գալիս եր, գիմումներ եր անում հորս  
մասին տեղեկություն ստանալու համար, բայց ի զուր:

Մի որ ել նա ներս մտավ բարձրածայն հեկեկալով, փաթաթ-  
վեց ինձ և ասաց.

— Սա՛շա, ել հայր չունես, նրանք քո հորը և իր ընկերներին  
պանել են ու չների առաջ նետել...

— Ծների առաջ նետել... վո՞նց թե, իմ հայրիկին չների առաջ  
և նետել...

Յես կրկնում եյի այս և չեյի հասկանում, չեյի հավա-  
տում...:

Հանկարծ ինձ թվաց թե խեզդվում եմ. դլուխս առա ձեռքե-  
րիս մեջ և լաց յեղա. յես շատ լաց յեղա...: Ուզում եյի դուրս  
կմալ, հորս սպանողներին զարմել, խփել...: Սպանել ու...  
Այդ որը յես շատ լաց յեղա: Զե՞ վոր յես փոքր եյի, յես վոր  
չինչ անել չեյի կարող...

### Առավոտ եր:

Հորս սպանությունից անցել եր 1½ տարի:

Յես նոր եյի զարթնել քնից և զրադեզնում եյի իմ փոքրիկ  
քրոջը, վորը ծնվել եր հորս սպանությունից 2 ամիս հետո:

Մայրս նստեց ինձ մոտ, համբուրեց ինձ և ասաց.

— Սա՛շա ահսնում ես; վոր մեր փիճակը լավ չի. դու այս-  
պես, առանց դպրոցի, առանց սովորելու չես կարող մնալ, այս-  
ուել քեզ դպրոց չեն ընդունի և նրանց դպրոցն ել մեզ հարկավոր  
չի. դու պիտի գնաս այստեղից, պիտի գնաս Ռուսաստան:

Յես զարմացա, բայց մայրս շարունակեց:

— Քեզ և մի քանի ուրիշ տղաների Մոպեն և ուղարկում.  
դուք կզնաք այստեղ, կսովորեք պրոլետարական դպրոցում. կը-  
տեսնեք թե խորհրդային իշխանության մեջ ինչպես ազատ են  
ապրում բանվորներն ու դյուլացիները և կվերադառնաք՝ աշխա-  
տելու համար, Բուլղարիայի բանվորության և դուզացիության  
մեջ նրանց ազատազրության համար:

Սա յեր քո հոր կամքը:

— Յես կկատարեմ հորս կամքը, -ասացի, պինդ փաթաթվե-  
րով մորս վզով:

Մի քանի որից հետո յես և ուրիշ 5 ընկերներ, -բոլորը սպան-  
ված կոմունիստների վորդիներ, -ձանապարհվեցինք դեպի Ռու-  
սաստան:

Այստեղ յես տեսա, թե դուք ինչպես ազատ եք ապրում, ա-  
զատ խոսում, յերգում...:

Յեվ յես մտածում եմ այն հաղարավոր յերեխաների մասին,

բանվորների և չքավոր գյուղացիների յերեխաների մասին, վո-  
րոնք դեռևս ապրում են բուրժուական յերկրներում: Յեվ ուզում  
իմ շուտ վերադառնալ ու պատմել նրանց այստեղի մասին, ասել,  
վոր այդպես ապրել չի կարելի, վոր պետք ե ազատագրվել բուր-  
ժուաների լծից:



Յերբ Սաշան վերջացրեց, պիոներների աչքերը վառվում  
եյին և նրանք մի տեսակ անհամբերություն եյին ցույց տալիս:


Հանկարծ իրար հաջորդեցին մի քանի ձայներ:

— Մենք ել կ՝ գանք, մենք ել քեզ հետ կ՝ գանք:

Պիոներները վոտքի եյին կանգնել, շրջապատել եյին Սա-  
շային, աղմուկ եր, շփոթ, շատերը իրենց բոռնցքներն եյին  
բարձրացրել և սպանում եյին բուրժուաներին:

Հնչեց ինտերնացիոնալը, վորի, դեռևս շարունակվող հըն-  
չյունների միջից, լսվում եր:

— Կեցցե՛ խորհրդավիճ Բուլղարիան, կեցցե՛, կեցցե...:



Գ և տ ե ր տ ո ւ ի տ ո յ ա ր ա ն

Սբբագրեց՝ Ա. Գառաջյան

Գլավիթ 7570 (ր) Գատվեր № 2298 Հրատար. № 2241 Տիրաժ 2000

Համձնված է արտադրաւրյան 7 հունիսի 1932 թ.

Ստորագրված է տպագրաւրյան համար 6 գիշ. 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0402678

12846

ԳՐԱԾ 15 ԿՈՊ.



СОФ-ГУР  
БОЛГАРЕЦ САША  
ГИЗ ССРА ЗРИВЛІТЬ 1932 Р